22 Օգոստ. Ս. Սինոդն հիմնուելով Երևանայ Վիճակային Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ համար 2544, հրամայեց թոյլ տալ Նախիջևանի Ս. Երրորդութեան եկեղեցին վերանորոգել իւր ունեցած 1200 ռուբ. եկեղեցական դրամովն, իսկ պակասորդն լրացնել հանգանակութեամբ տեղական ժողովրդոց, որի համար ընտրել շինութեան հոգաբարձուներ և տալ նորանց ժապաւինեալ տօմար։

—

29 օգոստ. Ս. Սինոդն հիմնուելով Երևանի Թեմական փոխանորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսի յայտարարութեան վերայ համ. 647՝ ենթարկեց զՄեսրովբ քահանայն Գետաթաղ գեղջ Տաթևու վիճակին չորս ամսեայ ապաշխարանաց առ դրան եկեղեցւոյն՝ իւր անարժան վարմանց համար եկեղեցւոյ Ս. սպասուց հետ, և անհոգութեանց իւր քահանայական կոչման մէջ։

—

29 օգոստ. Ս, Սինոդն հիմնուելով Վրաստանի և Իմէրէթի հայոց վիճակային Կոնսիստորիայի յայտարարութեան վերայ համ. 3236, թոյլատրեց նմին ենթարկել երկամեայ եկեղեցական ապաշխարանաց Ախալցխոյ Յովհան քահանայն Յարոյեանց նորա ծննդական իարդախ վկայական տալուն համար։

—

31 օգոստ. Ս. Սինոդն վեցամսեայ ապաշխարանաց ենթարկեց առ դրան եկեղեցւոյն, Աշտարակայ Գրիգոր քահանայն Տ. Գրիգորեանց, որ պսակ դրած է անչափահաս Առաքել Կարապետեանին ընդ օրիորդ Հռիփսիմէի Անտոնեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Տփխիսում մամուլի տակից դուրս եկան և վաճառվում են Կենդր. գրավաճառանոցում Սահակ Քահ. Սահակեանի աշխատասիրած Ս. Պատմութիւն, հին ուխտի, (աշակերտների և աշակերտուհիների համար) որի գինն է 30 կոպ. և Դասագիրք Կրօնի (ուղեցոյց հայ կրօնասոյցների համար 14 պատ-

կերպերով և 3 քարտէզներով, գինն է 1 ր. 75 կ. երկուքն ևս Տփխիսի Ընկ. հայերէն գրքերի հրատարակութեան արդեամբք հրատարակուած են։

Արժ. Սահակ Քահանայի աշխատասիրութիւն արժանի է գովութեան և գնահատութեան, որովհետև կրօնի դասագրքերի մէջ առաջին կարելի է համարել այժմեան մանկավարժական տեսակէտից նայելով։

Լեզուի մաքրութեան և նիւթի յարմարաւոր դասաւորութեան, իբրև ապացոյց կրնայ համարուել Արարատի Սեպտեմբերի մէջ հրատարակուած Արժ. Տէր Հօր մի յօդուածն Անա-ւան օրէն վերնագրով, որի վերայ կուղղենք ընթերցողների ուշադրութիւնն։

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ

Ա. ՋՐՈՑՅՆԵՐ *բնական պատմութիւնից մասն Ա. աշխատութիւն Պ. Ս. Փիլոյեանցի, տպուած է Տփխիս Մ. Դ. Ռոտինեանցի տպարանում, գինն է 40 կ. ծախւում է Տփխիս կենդրոնական և Աղբիւրի գրավաճառանոցներում, Նոր Բայազիտում աշխատասիրողի մօտ։*

Բ. ԲՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ *Բերնշտէյնի, քիմիայի նշանակութիւնը գործնական կեանքում, Թարգմանութիւն Սմբատ Մուշեղեանցի. տպուած է Տփխիս Մ. Վարդանեանցի տպարանում, գինն է 80 կ.*

ՎՐԻՊԱԿ

Սոյն Թուոյ երես 616 փոխանակ գրուելու «Հոգեհանգիստը կատարուեց հանգուցեալ Հայրապետի գերեզմանի վերայ», գրուած է Զեմարանի հանգստարանում.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.